ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «Սովորողների մեջ ինքնուրույնություն նախաձեռնություն և ստեղծագործական ունակությունների զարգացումը առարկայի դասավանդման ընթացքում
»

ԱՌԱՐԿԱ՝ տարրական դասարանների ուսուցիչ

ՀԵՂԻՆԱԿ՝ ԱԼԻՆԱ ԱԴՈՆՑ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ Սիսիանի հ.4 հիմնական դպրոց

ՂԵԿԱՎԱՐ՝ Ֆլորա Հովհաննսյան

2023

Բովանդակություն

1. Ներածություն 3

2. Աշակերտների ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան 4

3. Եզրակացություն 29

4. Օգտագործված գրականության ցանկ 30

Ներածություն

Տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքը բավականին մեծ դեր ու նշանակությունունի: Ինքնուրույն է համարվում այն աշխատանքը, որի ընթացքում սովորողները պարզորոշ պատկերացնում են աշխատանքի նպատակը, դրա կատարմա նկարգը և կատարում են այն՝ առանց ուսուցչի անմիջական մասնակցության: Ինքնուրույն աշխատանքը դիտարկվում է որպես ուսուցման միջոց:Ուսուցման գործընթացում, կրտսեր դպրոցական տարիքից սկսած, սովորողներին անհրաժեշտ է սովորեցնել ինքնուրույն աշխատել: Եթե երեխաները դեռևս փոքրտարիքից սկսած սովորում են ինքնուրույն աշխատել, ապա այդ կարողությունը դառնում է նրանց սեփականությունն ամբողջ կյանքի ընթացքում:

Ինքնուրույն մտածողությունը գիտնականները դիտարկում են որպես կա-րևորագույն բնութագրիչ անձի զարգացման հարցում: Որքան ինքնուրույն է մարդն իրարարքների, որոշումների և գործունեության մեջ, այնքան նա հասուն անհատ է:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: Ուսուցիչը պետք է իր համար հստակեցնի տարբերակված ինքնուրույն աշխատանքի նպատակը՝ ապահովել յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանքի առավել բարձր արդյունավետությունը ինչպես դասի ժամանակ, այնպես էլ տանը: Դրա համար անհրաժեշտ կլինի հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները՝ հիշողության, մտածողության, նախապատրաստվածության մակարդակը և այլն:

Աշակերտների ինքնուրույնությունն իբրև անձի ձևավորման խթան

Տարրական դասարանում ինքնուրույն աշխատանքի անցկացումն ունի որոշակի առանձնահատկություններ:

ՈՒսուցիչները հաճախ կիրառում են աշակերտների ակտիվությունը խթանող հնարներ, և համարում են, որ իրենք կազմակերպեցին ինքնուրույն աշխատանք: Անկասկած, այդ հնարների կիրառմամբ նրանք սովորեցնում են աշակերտներին ինքնուրույն աշխատել,բայց այն դեռ ինքնուրույն աշխատանք չէ:

<<Ինքնուրույնություն>> և <<ինքնուրույն աշխատանք>> արտահայտություններում կա տարբերություն: Ինքնուրույնությունը անհատի անձնային որակ է, իսկ ինքնուրույն աշխատանքը՝ ուսումնական աշխատանքի ձև:

Ինքնուրույնության և ինքնուրույն աշխատանքի միջև գոյություն ունի սերտ կապ: Ինքնուրույն աշխատանքը մի կողմից արդեն ձեռքբերված ինքնուրույնության արտահայտումն է, մյուս կողմից՝ ինքնուրույնության զարգացմանը նպաստող միջոց: Այսինքն՝ ինքնուրույն աշխատանքը նպաստում է ինքնուրույնության ձևավորմանը՝ որպես անհատ որակ:Ինքնուրույն աշխատանքները զարգացնում են սովորողների տրամաբանությունը, ճանաչողությունն ու ակտիվությունը:

Գիտելիքների յուրացման գործընթացն իրականացնող ճանաչողական կարողություններն ու հմտությունները զարգանում են ինքնուրույն աշխատանքի ընթացքում:

Ինքնուրույնության բարձր մակարդակը մատնանշում է մարդու սեփական ուժերի հանդեպ վստահությունը, ինքնագիտակցության և հետևաբար, նաև

հավակնությունների բավարար մակարդակի առկայությունը: Սակայն, նման որակը դատարկ տեղում չի ձևավորվում. Հանրակրթական համակարգից պահանջվում է մշակել ինքնուրույնության կայացմանը սատարող ռազմավարություն և իրացնել այն ինչպես կրթության բովանդակությամբ ու գնահատման համակարգով, այնպես էլ ուսուցման տեխնոլոգիաներով:

Ինքնուրույնության ձևավորման նախապայմանը ազատությունն է: Որպեսզի սովորողը ինքնուրույն ուսումնական գործունեություն ծավալի, նրան անհրաժեշտ է այդ հնարավորությունը տալ: Կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում աշակերտի ազատության սահմանները պիտի ավելի ընդարձակվեն: Ինքնուրույնությունը կարող է ձևավորվել միմիայն համապատասխան գործունեության պրոցեսում: Եթե երեխային սովորեցնում ենք պարտադրաբար, եթե նրան ուսումնական գործունեության ազատություն, սխալվելու և սեփական սխալների հիման վրա ճշմարիտ ճանապարհ դուրս գալու իրավունք չենք տալիս,երբեք նրանից ինքնուրույն մարդ չի ձևավորվի: Եթե երեխան շատ թե քիչ խելացի է՝ կարող է լավ կատարել հանձնարարություններ, իսկ ահա ստեղծագործաբար աշխատել, խնդիր դնել, ծրագիր ու պլան կազմել և ինքնուրույն իրականացնել դրանք՝ ի վիճակի չէ. Նա չունի ինքն իր հանդեպ այդ վստահությունը: Պարտադրանքը սպանում է մարդու մեջ աշխարհի հանդեպ ամեն մի հետքրքրություն: Չկա հետքրքրություն՝ չկա կայուն ուսումնական մոտիվացիա, որը հիմնարար գիտելիքներ ձեռք բերելու գլխավոր երաշխիքն է:

Ինքնուրույնության գաղափարի համատեքստում ուսուցչի համար կարևոր խնդիր է դառնում ուսուցման գործընթացն աստիճանաբար ինքնուսուցման գործընթացի վերածելը:

Ինքնուրույն ուսումնական աշխատանքներ լավագույնս կարելի է իրականացնել ուսուցման գործընթացը մասնակիորեն հետազոտական գործընթացի վերածելով: Ուսումնական աշխատանքները, որ կատարում է սովորողը դպրոցում կամ տանը,

պետք է ունենան իրենց մեջ հետազոտական գործունեության տարրեր և այդօրինակ գործունեության չափաբաժինը կրթության յուրաքանչյուր հաջորդ աստիճանում համապատասխան չափով ավելանա:

Ուսումնահետազոտական գործունեությունը ենթադրում է սովորողի ստեղծագործական ընդունակությունների արթնացում ու ակտիվացում: Ուսումնառությունը հետևողականորեն վերածելով ակտիվ ստեղծագործական աշխատանքի հանրակրթական դպրոցը դրանով իսկ պայմաններ կստեղծի այսպես կոչված ստեղծագործ (կրեատիվ) անձի ձևավորման համար, ինչը բոլոր ժամանակներում (և մեր ժամանակներում՝ առավել ևս) համարվել ու համարվում է անձի ամենակարևոր որակը: Ստեղծագործական ակտիվության չափանիշներ կարող են համարվել ինտելեկտուալ նախաձեռնության դրսևորումը, օպտիմալ մոտիվացիայի առկայությունը, ստեղծագործական ընդունակությունների և կարողությունների զարգացման մակարդակը, ինքնուրույնության դրսևորումը և ուսումնաիմացական գործունեության ինքնակազմակերպման ընդունակությունը:

Մանկավարժները հաճախ առարկում են, թե երեխան հասունացած չէ ինքնուրույնության համար և իրեն նվիրած ազատությունը կարող է չարաշահել՝ մատնվել անգործության: Այստեղ ճշմարտության մի աննշան բաժին կա: Բայց դպրոցի խնդիրն էլ հենց օգնելն է աշակերտին՝ գիտակցել ազատության ու պատասխանատվության դիալեկտիկան: Անառարկելի ճշմարտություն է, որ ազատությունը սովորում են գնահատել ազատ ապրելու պայմաններում, մտածել, պրոբլեմներ հաղթահարել սովորում են դրանք լուծելով, ինքնուրույնության սովորում են նման գործունեություն իրականացնելով, ի վերջո՝ մտածել սովորում են մտածելով, ստեղծագործական գործունեության մեջ ներգրավվելով:

Իմ դիտարկումների արդյունքում՝ խմբային աշխատանքների ժամանակ , բացահայտելով դժվարացող աշակերտների խնդիրներն ու խոչընդոտները, որպես խթան մշակել եմ այնպիսի հնարներ ու մեթոդներ, որոնցով տվյալ աշակերտների մեջ

զարգացրել եմ ինքնուրույն գործելու կարողություն,ինչպես նաև՝ նրանց մոտ ձևավորել եմ արժեհամակարգ՝ ինքնավստահություն, ինքնուրույնություն և նպատակասլացություն, որոնց շնորհիվ նրանք աշխատել են ավելի համարձակ ու անկաշկանդ:

Մտածողության ինքնուրույնությանը բնորոշ են հետևյալ կարողությունները.

–առանձնացնել գլխավորը, տեսնել ընդհանուր օրինաչափությունը և կատարել ընդհանրացնող եզրահանգումներ,

–հետևողական, տրամաբանորեն հիմնավորելիր գործողությունները և վերահսկել դրանք,

–գիտելիքները կիրառել անծանոթ պայմաններում՝ հաճախակի բարդացնելով՝ստեղծագործաբար, ոչ ստանդարտ մոտեցմամբ,

–ստանալ արդյունքները՝առանց օգնության դիմելու:

Ընդհանուր առմամբ, տարբերակվում են աշակերտների ինքնուրույնության չորս մակարդակ.

Առաջին մակարդակ՝պարզ վերարտադրողական ինքնուրույնություն: Այս մակարդակի ինքնուրույն գործունեությունը հատկապես վառ դրսևորվում է վարժությունների կատարման ընթացքում, որոնք պահանջում են գիտելիքների պարզ վերարտադրություն, երբ սովորողները, իմանալով կանոնները, իրենց ձեռքի տակ ունենալով պատրաստի նմուշը, ինքնուրույն լուծում են առաջադրանքները:

Ինքնուրույնության առաջին մակարդակ ունեցող աշակերտն առաջադրանքների կատարման ընթացքում անպայման կիրառում է իր ձեռքի տակ եղած օրինակը, նմուշը, մեթոդը: Եթե առաջադրանքը փոքր-ինչ չի համապատասխանում տրված նմուշին, ապա աշակերտը կդժվարանա լուծել այն: Ընդ որում, նա հաճախակի հրաժարվում է կատարել առաջադրանքն այն պատճառաբանությամբ, որ այդպիսի առաջադրանքներ դեռևս չի կատարել:

Ինքնուրույնության երկրորդ մակարդակը կարելի է անվանել ընտրովի ինքնուրույնություն: Այս մակարդակում ինքնուրույնությունը դրսևորվում է այսպես. Աշակերտը մի շարք կանոններից, դատողությունների օրինակներից,

Սահմանումներից և այլն կարողանում է ընտրել մեկը և կիրառել այն նոր առաջադրանքների ինքնուրույն կատարման գործընթացում:

Ինքնուրույնության այս մակարդակում սովորողները կիրառում են մտավոր գործողություններ կատարելու կարողություններ՝ համեմատություն, վերլուծություն, համադրությունևայլն: Վերլուծելով առաջադրանքի պահանջները՝աշակերտն ընտրում է արդեն ձեռք բերած գիտելիքներից, կարողություններից այն կարևորը, որն անհրաժեշտ է տվյալ առաջադրանքի կատարման համար:

Ինքնուրույնության երրորդ մակարդակը՝ մասնակի-որոնողական ինքնու-րույնությունն է: Այս մակարդակում աշակերտն առաջադրանքների կատարման ընթացքում կիրառում է առավել ընդհանրական կարողություններ, որոնք ձեռք է բերել այլ առարկաների և այլ թեմաների ուսուցման ընթացքում: Նա կարողանում է կատարել ինքնավերահսկում և ինքնագնահատում, կարողանում է ինքնուրույն պլանավորել և կազմակերպել իր ինքնուրույն գործունեությունը: Սակայն այս մակարդակում դեռևս աշակերտը չի դրսևորում ստեղծագործական մոտեցում:

Ինքնուրույնության չորրորդ մակարդակը՝ ստեղծագործական-հետազոտական գործունեություն ծավալելու մակարդակն է:

Ինքնուրույն աշխատանքը պետք է կազմակերպել այնպես, որպեսզի այն համապատասխանի յուրաքանչյուր աշակերտի կարողություններին, այսինքն ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները պետք է լինեն տարբերակված: Ուսուցիչը պետք է իր համար հստակեցնի տարբերակված ինքնուրույն աշխատանքի նպատակը՝ապահովել յուրաքանչյուր աշակերտի կատարած աշխատանքի առավել բարձր արդյունավետությունը ինչպես դասի ժամանակ, այնպեսէլտանը: Դրա համար անհրաժեշտ կլինի հաշվի առնել յուրաքանչյուր աշակերտի անհատական առանձնահատկությունները՝հիշողության, մտածողության, նախապատրաստ-վածությանմակարդակը և այլն:

Աշակերտների ինքնուրույն գործունեության կազմակերպման ձևերը

Փորձը ցույց է տալիս, որ՝

- Ճիշտ կազմակերպված ինքնուրույն աշխատանքը պարբերաբար անցկացնելով՝ սովորողներն առավել խորը և ճկուն գիտելիքներ են ձեռք բերում, քան ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքների հաղորդման դեպքում:
- Ըստ դիդակտիկական նպատակի և բովանդակության տարատեսակ ինքնուրույն աշխատանքի կազմակերպումը նպաստում է սովորողների ճանաչողական և ստեղծագործական ունակությունների, մտածողության զարգացմանը:
- Ինքնուրույն աշխատանքի անցկացումն ըստ մանրամասն մշակված մեթոդիկայի՝ արագացնում է սովորողների՝ գործնական կարողությունների և հմտությունների ձևավորումը, իսկ այն իր հերթին դրականորեն է ազդում ճանաչողական կարողությունների և հմտությունների ձևավորման վրա:

- Ժամանակի ընթացքում դասերին ինքնուրույն աշխատանքի պարբերաբար կազմակերպման և տրված առարկայից տրվող տնային աշխատանքների բազմազան տեսակների հետ դրա համապատասխանեցման դեպքում մշակվում է ինքնուրույն աշխատելու հիմնարարկարողությունները:

Վերը գրվածից պարզ է դառնում, թե որքան մեծ նշանակություն ունի ինքնուրույն աշխատանքը կրտսեր դպրոցականների ուսուցման գործընթացում: Տարրական դասարաններում գործունեություն ծավալելու կարողության ձևավորումը, իսկ այն հնարավոր է իրականացնել սովորողների ինքնուրույն գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով: Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, սովորողների ինքնուրույն աշխատանքն ունի որոշակի կառուցվածք: Այն իր մեջ ներառում է վեց հիմնական փուլեր.

1. կազմակերպչական. Սա երեխաների աշխատանքային միջավայրի նախապատրաստումն է:
2. բառարանների, հուշաթերթիկների բաշխում, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքի ընթացքում: Աշխատանքային միջավայրի նախապատրաստումը կարևորագույն պայման է արդյունավետ ինքնուրույն աշխատանքի կազմակերպման համար:
3. նախապատրաստական. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է կամ մեկ անգամ ևս հիշեցնում է երեխաներին հանգիստ նստել, չխանգարել իր ընկերներին, պահպանել լռություն և կարգուկանոն, ուշադիր աշխատել, ինքնաստուգում կատարել և այն, այսինքն՝ այն ամենը, ինչը կապահովի աշխատանքի արդյունավետությունը:
4. կողմնորոշիչ. Այս փուլում ուսուցիչը սովորեցնում է առաջադրանքի բովանդակությունը: Նա ստանալով առաջադրանք՝ ընթերցում կամ վերընթերցում է պայմանը, դիտարկում է առարկան կամ գծագիրը, ընթերցում է տեքստը և այլն: Այս փուլի ընթացքում սովորողն իմաստավորում առաջադրանքը, առանձնացնում է, թե ինչ է տրված, թե ինչ պետք է իմանալ

կամ կատարել, ինչպիսի գիտելիքներ և գործողություններ են պահանջվում աշխատանքի կատարման համար: Երեխաները ծանոթանում են հուշաթերթիկի բովանդակությանը: Բացի դրանից, այս փուլում,ուսուցիչը կարող է բաշխել աշխատանքի պլանը:Պլանը կարելի է գրառել նաև գրատախտակին: Գրատախտակին փակցվում է նաև թեմայի շուրջ մշակված պաստառները, սխեմաները և այլն:Այս փուլում ձևավորվում է ուսումնական աշխատանք ծավալելու կարևորագույն կարողություններից մեկը՝ աշխատանքի համար կարևոր նյութեր ընտրելու կարողությունը:

5. հիմնական փուլ. Ալս փուլում կատարվում է ինքնուրույն աշխատանքը:
6. ամփոփիչ փուլ.Այս փուլում կատարվում է անցուդարձ:Ուսուցիչը գնահատում է, քննարկում է, վերլուծում ամբողջ դասարանի աշխատանքի ընթացքը, արդյունքները:

Նպատակահարմար է առաջադրանքի կատարման ստուգման համար առանձնացնել ևս մեկ կառուցվածքային փուլ՝ 7. ստուգիչ փուլ, որի ընթացքում աշակերտը կատարելով առաջադրանքը՝ինքն իր սեփական նախաձեռնությամբ ստուգում է իր աշխատանքը և գնահատում այն,այսինքն՝ իրականացնում է ինքնաստուգում և ինքնավերահսկում:

Կազմակերպելով սովորողների ինքնուրույն աշխատանքը՝ ուսուցիչը պետք է կարողանա պատասխանել հետևյալ հարցերին.

- Տվյալ ուսումնական նյութի ուսումնասիրման գործընթացի ու փուլում է նպատակահարմար կազմակերպել ինքնուրույն աշխատանքը,
- ինքնուրույն աշխատանքի ինչ տիպ է անհրաժեշտ ընտրել և կիրառել գիտելիքների յուրացման տվյալ փուլում:

Ինքնուրույն գործունեության կազմակերպումն ու անցկացումը պահանջում է հատուկ մոտեցում:Այդ պատճառով անհրաժեշտ է մանրամասն մշակել դասի պլանը, որոշել ինքնուրույն աշխատանքի տեղը դասի ընթացքում, բովանդակությունը,դրա կազմակերպման ձևերն ու մեթոդները:Միայն այս դեպքում

ինքնուրույն աշխատանքը արդյունավետ կընթանա: Ընդ որում, մանկավարժը պետք է նախատեսի աշխատանքի բարդության մակարդակը, ծավալը, հնարավոր սխալները, դժվարությունները, որոնք կարող են ծագել երեխաների մոտ՝ այդ աշխատանքի կատարման ընթացքում: Ինքնուրույն աշխատանքի կազմակերպման ընթացքում անհրաժեշտ է մտորել նաև սովորողներին ցուցաբերվող օգնության և ստուգման ձևերի մասին: Հատկապես տարրական դասարաններում ինքնուրույն աշխատանքի կազմակերպման նպատակով անհրաժեշտ է կիրառել բազմազան մեթոդական երաշխավորություններ , հուշաթերթիկներ: Դրանք նպաստում են արագ յուրացնել գործողությունների որոշակի հաջորդականություն կատարելու և սեփական գործունեությունը կազմակերպելու համար անհրաժեշտ կարողությունները:

Ինքնուրույն աշխատելու կարողությունները մշակվում են նպատակաուղղված վարժությունների և աստիճանաբար բարդացող առաջադրանքների միջոցով: Մինչ ինքնուրույն աշխատանքի համար առաջադրանքներ տալը, այդ առաջադրանքների տեսակները յուրացվում են նախապես ուսուցչի հետ միասին կատարվող աշխատանքների միջոցով:Այնուհետև առաջադրանքների այս կամ այն մասը կատարում են աշակերտները, և , վերջապես, նրանք հնարավորություն են ստանում ամբողջ առաջադրանքը կատարել ինքնուրույն:Ուսուցիչը պետք է որոշի առաջադրանքների տեսակը, դրա տեղը դասի ընթացքում, բացատրի նպատակը և կատարման քայլերի հաջորդականությունը, հետևի սովորողների աշխատանքին՝ անհրաժեշտության դեպքում ցուցաբերելով օգնություն առանձին աշակերտներին: Աշխատանքի ստուգումը ևս կատարվում է ուսուցչի ղեկավարությամբ:Վերջինս արդյունքների քննարկմանը մասնակից է դարձնում ամբողջ դասարանին:

Ինքնուրույն աշխատանքի հիմնական տեսակները կարելի է դասակարգել ըստ մի քանի հատկանիշների, որոնք միևնույն ինքնուրույն աշխատանքը բնութագրում են

տարբեր տեսանկյուններից: Ինքնուրույն աշխատանքի տեսակները ներկայացնենք աղյուսակի տեսքով.

I Ինքնուրույն աշխատանքի դասակարգման հատկանիշներ՝ ըստ ուսումնական նպատակների

1. Հիմնարար գիտելիքների կրկնության և նոր նյութի ընկալմանը նախապատրաստող
2. Նորնյութիուսումնասիրությանընպաստող
3. Գիտելիքները համակարգող
4. Որոշակի կարողություններ զարգացնող
5. Ստուգող, վերահսկող

II Ըստ ճանաչողական գործունեության բնույթի

1. Ըստտրվածնմուշիօրինակ՝ գրելտառեր, թվեր, սոսնձել տուփ և այլն¤,այսինքն՝ աշխատանքներ, որոնք առավելապես հիմնված են ընդօրինակման վրա:Այսպիսի աշխատանքների կատարման ընթացքում աշակերտների ինքնուրույն գործողությունները սահմանափակվում են պարզ վերարտադրման միջոցով՝ ըստ նմուշի կրկնելով գործողությունները: Այնուամենայնիվ, այսպիսի աշխատանքների դերը բավականին մեծ է:

2. Կառուցողական,որոնք ստեղծագործական մոտեցում են պահանջում:Ընդ որում, կամ ցույց են տալիս առարկան, որի շուրջ պետք է աշխատել, կամ էլ նշում են հարցը, թեման, որը պետք է բացահայտեն: Օրինակ՝ պատրաստել որևէ խաղալիք, հորինել շարադրություն որևէ թեմայով և այլն: Սովորողներին ներկայացվում է նշանակալի ազատություն, ինքնուրույնություն ինչպես բովանդակության որոշման, այնպես էլ աշխատանքի հնարների ընտրության մեջ: Կառուցողական ինքնուրույն աշխատանքները սովորեցնում են վերլուծել իրադարձությունները, երևույթները, փաստերը, ձևավորում են ճանաչողական գործունեության հնարները և մեթոդները, նպաստում են ճանաչողության նկատմամբ ներքին

դրդապատճառների զարգացմանը, պայմաններ են ստեղծում դպրոցականների մտավոր ակտիվության զարգացման համար: Այս տիպի ինքնուրույն աշխատանքները հիմք են ձևավորում աշակերտի ստեղծագործական գործունեության հետագա զարգացման համար;

2. Ստեղծագործական – հետազոտական, որոնք երեխաների ինքնուրույն գործունեության գագաթնակետն են հանդիսանում: Այդ աշխատանքները ամրապնդում են գիտելիքների ինքնուրույն որոնման հմտությունները: Դրանք ստեղծագործող անձի ձևավորման արդյունավետ միջոցներից են: Ստեղծագործական բնույթի ինքնուրույն աշխատանքները հնարավորություն են ընձեռնում աշակերտներին ձեռք բերել իրենց համար սկզբունքորեն նոր գիտելիքներ:

III Ըստ կազմակերպման ձևի

1.Ընդհանուր ճակատային, երբ բոլոր սովորողները կատարում են միևնույն աշխատանքը

2. Խմբային, երբ սովորողների տարբեր խմբեր աշխատում են տարբեր առաջադրանքների վրա,

3. Անհատական, երբ սովորողներից յուրաքանչյուրն աշխատում է հատուկ առաջադրանքների վրա:

IV Ըստ ինքնուրույն աշխատանքի ընթացքում դիդակտիկ նյութերի կիրառության

1. Աշխատանք դասագրքով, տեղեկատու գրականության շուրջ բառարաններ, հանրագիտարաններ և այլն:Տարրական դասարաններում մեծ տեղ է հատկացվում գրքի, գեղարվեստական տեքստի, նկարազարդման շուրջ կատարվող ինքնուրույն աշխատանքին:Գրքի շուրջ ինքնուրույն աշխատելու կարողությունը սովորելուն նպաստող ամենակարևոր կարողություններից է: Առանց այդ կարողության

յուրացման հնարավոր չէ իրականացնել գիտելիքների լիարժեք յուրացումը քանի որ յուրացման գործընթացի կարևոր կառուցվածքային տարրերը, ինչպիսիք են՝ իմաստավորումը և ամրապնդումն իրականացվում է դասագրքի շուրջ կատարվող աշխատանքի ընթացքում:Գրքի շուրջ աշխատելու անկարողության պատճառով ուսումնական աշխատանքն աշակերտի համար դառնում է տանջալի աշխատանք: Գրքի շուրջ աշխատելու կարողությունների զարգացումն իրականացվում է բոլոր առարկաների դասերի ընթացքում:

2. Շարադրություններ ըստ հենակետային բառերի, նկարների շուրջ և այլն:

Դիտումներ և գործնական աշխատանքներ: Դիտումնեիրի համար որպես դիտարկվող առարկաներ կարող են լինել շրջապատող առարկաները և երևույթները:Սովորողները հաշվում են , չափում, ստեղծում:Նրանք դիտարկում են առարկաները և երևույթները անմիջականորեն բնության մեջ, անցկացնում են փորձեր՝ կատարելով գործնական աշխատանքներ:

Դիտարկումների, փորձերի, գործնական և լաբորատոր աշխատանքների հետ կապված ինքնուրույն աշխատանքները ունեն շատ մեծ նշականություն, քանի որ նպաստում են աշակերտների դիտողականության, հետազոտական կարողությունների և հմտությունների զարգացմանը:

4.Աշխատանք բաշխիչ նյութերի կիրառման

5.Գրաֆիկական աշխատանքներ

6.Ինքնուրույն աշխատանքներ, որոնք կախված են դիդակտիկ նյութերի ստեղծման հետ: Սովորողները պատրաստում են ինքնաշեն գրքեր §ես և շրջակա առարկայի¦ ալբոմներ, զանազան թեմաներով քարտեր և այլն:

V Ըստ կատարման տեղի

1. Դասարանում,

2. Արտադասարանական կամ արտադպրոցական ուսումնական միջոցառումների ժամանակ

3. Տանը:

Իսկ ի՞նչ ծավալով և ի՞նչ բնույթի առաջադրանքներ են անհրաժեշտ առաջադրել ինքնուրույն կատարելու համար: Այսպես.

1. Առաջադրանքների ծավալը պլանավորելու համար, անհրաժեշտ է հաշվի առնել սովորողների աշխատանքի տեմպը: Ժամանակը ճիշտ կազմակերպելու համար պետք է նախապես կատարել ինքնուրույն աշխատանքի համար պլանավորված առաջադրանքը: Այդ դեպքում մենք առաջադրանքի կատարման համար ուսուցչի կողմի ծախսված ժամանակը անհրաժեշտ է բազմապատկել երեքով, հենց հատկապես այդքան բոպե է անհրաժեշտ առաջադրանքի կատարման համար: Առաջադրանքի կատարման ընթաքում ուսուցիչը կարող է հասկանալ, թե ինչ տարրեր կարող են արգելակել կամ արագացնել սովորողների աշխատանքը:

2. Սովորողների ինքնուրույն ուսումնական գործունեության համար նախատեսված առաջադրանքերի բնույթը անհրաժեշտ է աստիճանաբար բարձրացնել:

3. Առաջադրանքները պետք է ընտրել այնպես, որ նպաստեն դրանց նկատմամբ հետաքրքրության զարգացմանը:

4. Սովորաբար, աշակերտները ոչ միաժամանակ են ավարտում ինքնուրույն աշխատանքը: Ինքնուրույն աշխատանքների համար առաջադրանքներ ընտրելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման գործընթացում սովորողներից պահանջում է տարբեր ժամանակահատված: Այդ պատճառով նպատակահարմար է նախապես պատրաստել առաջադրանքներ, լրացուցիչ առաջադրանքներ՝ արագ աշխատող աշակերտների համար:

5. Դժվար է ընտրել այնպիսի առաջադրանքներ, որոնք համապատասխանում ենբոլորաշակերտներիներուժին:Եթեառաջադրվում է պարզ, միատիպ վարժություններ,օրինակ՝բազմապատկման կամ բաժանման, ապա

առաջադրանքների տարբերակումը կարգավորվում է ծավալով:Առավել դժվար է, օրինակ ընտրել յուաքանչյուր աշակերտի ներուժի համապատասխան առաջադրանքներ:Այդ պատճառով նպատակահարմար է առաջադրել տարբերակված առաջադրանքներ՝ հաշվի առնելով սովորողների առանձին խմբերի ներուժը:

Սակայն պետք է նշել ,որ ըստ բարդության աստիճանի տարբեր առաջադրանքներ ընտրելը բավականին բարդ է: Ընտրել հեշտ առաջադրանք, որը համապատասխանում է թույլ աշակերտի ներուժին, դժվար չէ: Բայց այստեղ մի մեծ վտանգ է թաքնված: Եթե թույլ կարողություններ ունեցող աշակերտը դասից դաս անընդհատ դյուրին աշխատանք կատարի նույն պահանջով, ապա այդպես կարող ենք խորացնել նրա զարգացման հետ կապված խնդիրները:Այդ պատճառով այդպիսի սովորողների համար ճանաչողական առաջադրանքների ընտրության ընթացքում ուսուցիչն իր առջևնպատակ է էդնում.սկզբում աշխատանքում ներառել պարզ առաջադրանքներ, ապա աստիճանաբար յուրացման համար ներմուծել առավել բարդ նյութեր:

6. Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված առաջադրանքները ցանկալի է, որ աշակերտներից պահանջեն կամային ջանքեր:

7. Ինքնուրույն աշխատանքի համար ցանկալի է առաջադրել այնպիսի առաջադրանքներ, որոնց կատարման համար կպահանջվի գիտելիքների կիրառում նոր իրավիճակներում:Միայն այդ դեպքում ինքնուրույն աշխատանքը կնպաստի սովորողների ճանաչողական ունակությունների ձևավորմանը և նախաձեռնողականության դրսևորմանը:

8. Ցանկալի, որ ինքնուրույն աշխատանքի համար նախատեսվող առաջադրանքները հետաքրքրեն սովորողներին:

9. Առաջադրանքների բովանդակությունը պետք է մատչելի լինի աշակերտին, հենված լինի երեխաների կենսափորձի վրա, բայց միևնույն ժամանակ գտնվի

նրանց զարգացման «մերձակա գոտում» , պարունակի որոշակի դժվարություն, որը երեխան կարող է հաղթահարել:

10. Յուրաքանչյուր թեմայի շուրջ առաջադրանքների ընտրության ընթացքում պետք է հատուկ ուշադրություն դարձնել հասկացության բոլոր հատկանիշների բազմակողմանիորեն ամրապնդմանը, հստակ առանձնացնել այն կարողություններն ու հմտությունները, որոնք անհրաժեշտ է ձևակերպել և ամրապնդել: Պատահականության բացառումը նպաստում է դասի արդյուանվետության բարձրացմանը:

11. Առաջադրանքների համակարգը պետք է կազմակերպել փուլ առ փուլ: Անհրաժեշտ է սկսել տիպային առաջադրանքներից, մանրամասն բացատրել դրանց լուծման մեթոդները: Ընդ որում աշակերտներին պետք է առաջարկել գործողություններ կատարել ըստ օրինակի:

Այնուհետև անհրաժեշտ է առաջադրել նույնատիպ առաջադրանքներ:

Հետոկարելի է առաջարկել առաջադրանքներ՝ չափազանց համառոտ հրահանգ տալով:

Վերջին փուլում անհրաժեշտ է առաջարկել առաջադրանքներ ամբողջովին ինքնուրույն կատարման համար:Այս փուլում նպատակահարմար է սովորողներին առաջարկել ստեղծագործական բնույթի առաջադրանքներ:

ԴԱՍԻ ՊԼԱՆ1

Առարկան՝ մայրենի

Դասարան՝ 3 –րդ

Դասի թեման՝ <<Իմ գրադարանը>>,(հատկանիշ ցույց տվող բառեր)

Ժամաքանակը՝ 2.45րոպե

Դասի տիպը՝ հաղորդման և հարցման դաս

Միջառարկայական կապ (կերպարվեստ,ես և շրջակա աշխարհը)

Խաչվող հասկացություններ՝ պատճառ և հետևանք,զարգացում

Դասի նպատակը՝

- զարգացնել սահուն ընթերցելու կարողությունը,
- ձևավորել և զարգացնել բանաստեղծության միտքը , փոխաբերական իմաստը վերլուծելու կարողությունը,
- ըստ նկարի մեկնաբանել դարձվածքի ուղիղ և փոխաբերական իմաստները։
- ձևավորել և զարգացնել ստեղծագործելու կարողությունը
- ձևավորել և զարգացնել ինքնուրույն աշխատելու հմտությունը

Դասի վերջնարդյունքը՝

- կապ հաստատելով նախկին փորձի ու դասանյութի բովանդակության միջև՝ կպատասխանեն ուսուցչի տրված հարցերին՝ ներկայացնելով փաստարկներ և հիմնավորումներ,
- շարժիչ ուժ կլինեն <<Խմբային ընթերցանության >> ընթացքում՝ դասընկերներին ուղղորդելով արտահայտիչ ընթերցանության ժամանակ կենտրոնանալ իրենց ձայնի վրա,
- հեքիաթ, պատմվածք հորինելու փորձեր կանեն,
- կկարողանան ինքնուրույն աշխատելու ընթացքում հերոսներին բնութագրել հատկանիշ ցույց տվող բառերով,
- նախագծային գործունեության արդյունքում հոդված և ելույթ պատրաստելու նպատակով կգրանցեն լսած տեղեկատվությունը հարստացնելով այն սեփական կենսափորձով և այլ աղբյուրներից ձեռք բերած գիտելիքներով։

Դասի ընթացքը

ԽԹԱՆՈՒՄ

1.Զրույց գրքի , գրադարանի, դրանց նշանակության մասին։

2.Զրույցի մոտավոր բովանդակությունը

Սովորողների պատմում են այն գրադարանի կամ գրադարանների մասին , որոնք իրենք այցելել են։

Իմաստի ընկալում

Հարց ու պատասխանի միջոցով երեխաները փորձում են կանխագուշակել բանաստեղության բովանդակությունը։

3.ԶՐՈՒՅՑ ՀԵՂԻՆԱԿԻ ՄԱՍԻՆ

Ուսուցիչը ներկայացնում է , որ Լիպարիտ Սարգսյանը ծնվել է Լոռու գեղատեսիլ բնության գողտրիկ անկյուններից մեկում, որը հեռու չէ ամենայն հայոց բանաստեղծի՝ Հովհաննես Թումանյանի ծննդավայր Դսեղից և հիշեցնում <<Մայրենի2>> դասագրքից <<Տղան ու մրջյունը>> բանաստեղծությունը։

4.Տեքստի լուռ ընթերցում՝ առաջադրանքով

Մտքում դանդաղ, ուշադիր կարդացե՛ք բանաստեղծությունը՝ փորձելով պարզել, թե ի՞նչ գրքեր կան փոքրիկի գրադարանում։ Գրե՛ք այն հերոսների անունները , որոնք կհանդիպեն տեքստում և նշե՛ք , թե որ ստեղծագործությունների հերոսներն են դրանք

5.Տեքստի բարձրաձայն ընթերցում։

Ընթերցվում է մեկնաբանություններով։

6.Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ վերլուծություններ և եզրահանգումներ կատարելու նպատակով։

7. Աշխատանք տեքստի սահուն ընթերցանության կարողության զարգացման շուրջ

Կարելիէ կիրառել <<Խմբային ընթերցանություն>> մեթոդական հնարը։Ամբողջ խմբին միաժամանակ կարդալու նպատակն այն է , որ նրանք դա անեն աշխույժ և ոչ միապաղաղ ձայնով։Երբ երեխաների առջև խնդիր է դրվում բանաստեղծությունը կարդալու որոշակի ձևով , նրանք սովորում են կենտրոնանալ իրենց ձայնի վրա։

Տեքստի ընթերցումից հետո դասարանը բաժանել խմբերի (4,5հոգանոց) :

Յուրաքանչյուր խմբին հանձնարարել առաջադրանքներ՝ Ի խումբ-Ի՞նչ բառերով են բնութագրված բանաստեղծության մեջ հիշատակված հերոսները,II խումբ՝ Հատկանիշ

ցույց տվող տրված բառերց ո՞րը ո՞ր հերոսին կվերագրես,III խումբ՝ Որոշե՛ք՝ էլ ինչ բառերով կարող եք բնութագրել ձեզ ծանոթ հերոսներին,IVԽումբ՝Նկարում ո՞ր հերոսի մասին չի խոսվում բանաստեղության մեջ: Պատմի՛ր նրա մասին:



Խմբային աշխատանքի համար աշակերտները գնահատվեցին. I խմբի աշակերտներըվաստակեցին10, II խմբի անդամները՝ 9, III խմբինը՝ 8, իսկIV խմբինը՝ 7 :

ԿՇՌԱԴԱՏՈՒՄ

Անդրադարձ, ամփոփում

Առաջարկել գործնական աշխատանք – նախագիծ՝ <<Իմ ընտանեկան գրադարանը >> խորագրով: Աշխատանքի մեկնարկը կազմակերպել այս դասին , արդյունքը ներկայացնել թեմայի ամփոփման դասին:

ԴԱՍԻ ՊԼԱՆ 2

Առարկան՝ մայրենի

Դասարան՝ 3-րդ

Դասի թեման՝ <<Իմ դասագիրքը>>: Վանկատում(կրկնություն)

Ժամաքանակը՝ 2.45 րոպե

Դասի տիպը՝ հաղորդման դաս

Միջառարկայական կապ-կերպարվեստ

Խաչվող հասկացություններ-Անհատ և հարաբերություն

Դասի նպատակը՝

- զարգացնել վարժ, սահուն ընթերցելու կարողությունը,
- բնագրի վերաբերյալ տրված հարցերը քննարկել փոքր խմբերում, դրսևորել բազմակարծություն, կարողանալ խմբավորել իրենց արտահայտած մտքերն ու շարադրել,
- վերարտադրել բանաստեղծությունը՝ մեկնաբանելով՝ մեկնաբանություններ անելով բովանդակության շուրջ,
- ասմունքելով արտահայտել բանաստեղծության տողերում թաքնված զգացմունքները,
- ըստ նկարի մեկնաբանել դարձվածքի ուղիղ ու փոխաբերական իմաստները,
- կրկնել և ամրակայել վանկատման մասին ունեցած գիտելիքները։

Դասի վերջնարդյունքը՝

- կկանխագուշակեն տեքստի բովանդակությունը՝ ուսուցչի ուղղորդմամբ կատարելով եզրահանգումներ
- կգրեն նկարագրական բնույթի խոսք ՝ <<Իմ դասագրքերը >> վերնագրով, կվերանայեն գրվածը պարզության տեսանկյունից, կստուգեն՝ ուղղելով բառերի, բառակապակցությունների, նախադասությունների անտեղի կամ սխալ գործածության դեպքերը,
- կնկարագրեն տեքստի հերոսներին՝ սեփական կարծիքը հաստատելու համար վկայություններ, փաստարկներ օգտագործելով։

ԴԱՍԻ ԸՆԹԱՑՔԸ

ԽԹԱՆՈՒՄ

Կարելի է կիրառել <<Մասնագիտական բառ>> մեթոդական հնարը։Նախ ուսուցիչը աշակերտներին հարցնում է ՝ արդյոք գիտեն , թե ինչպես է մագնիսն ազդում մետաղի վրա։Ինչպես մագնիսն է ձգում մետաղները, այդպես էլ մագնիսական բառը դեպի իրեն է ձգում այն բառերն ու արտահայտությունները, որոնք այս կամ այն չափով առնչվում են տրված <<մագնիսական բառի>> իմաստին։ Այնուհետև ուսուցիչը գրատախտակին գրում է <<դասագիրք բառը>>՝ ուղղահայաց ձևով.

Դ
Ա
Ս
Ա
Գ
Ի
Ր
Ք

Առաջարկվում է սովորողներին բաժանվել խմբերի և <<դասագիրք >> բառի յուրաքանչյուր տառով սկսվող այնպիսի բառեր ու արտահայտություններ գրել, որոնք առնչվեն <<դասագիրք>> հասկացության հետ։Այնուհետև փորձում են իրենց գրած բոլոր բառերը համախմբել և ամփոփել մեկ նախադասությամբ, որտեղ կենտրոնական տեղ կգրավի <<մագնիսական բառը>>:

Հարցերի միջոցով աշակերտները եզրահանգում են , որ դասագիրք կարող էեն լինել ոչ միայն այնգրքերը , որոնք իրենք ուսումնասիրում են դպրոցում։

Իմաստի ընկալում

Խմբերը լուռ ընթերցում են և կատարում են առաջադրանքը

- Մտքում դանդաղ , ուշադիր կարդացե՛ք բանաստեղծությունը ՝ փորձելով պարզել, թե ինչու է հեղինակն ամենալավ դասագիրքը համարում բարի խոսքերն ու հողոտ ձեռքերը։
- Զրույց տեքստի բովանդակության շուրջ՝ նախնական ընկալումը պարզելու նպատակով։

Տեքստի բարձրաձայն ընթերցում

Ընթերցվում է մեկնաբանություններով և <<Զրույց հեղինակի հետ>> հնարի կիրառմամբ։Իրականացվում է նաև բառային աշխատանք։

- Աշխատանք ընթերցողական կարողությունների զարգացման շուրջ

Կարելի է կիրառել <<Ընթերցանություն զույգերով>> մեթոդական հնարը։ Բաժանվում են զույգերի : Զույգից յուրաքանչյուրն ընտրում է , թե որ հատվածն ինքը պետք է ընթերցի, հետո ինքնուրույն ընթերցում են այնքան, մինչև կարողանան սահուն կարդալ։ Այնուհետև հերթով բարձրաձայն ընթերցում են իրենցընտրած հատվածը։ Գնահատելիս ուսուիչը ուշադրություն է դարձնում ձայնի ուժեղությանը (երեխաներին պետք է բացատրել, որ անհրաժեշտ է կարդալ առանց բղավելու, բայց և որոշակի բարձրությամբ, հատկապես քնարական զգացմունքները պետք է արտահայտել ցածր, մեղմ, քնքուշ ձայնով) և ձայնի բարձրության վրա(ձայնի բարձրացման և իջեցման անհրաժեշտությունը որոշվում է կետադրական նշաններով։ Տվյալ բանաստեղծության դեպքում պետք է բացատրել , որ ստորակետը ցույց է տալիս , որ արտահայտվող միտքը չի ավարտվել, դեռևս շարունակություն ունի,

հետևաբար ձայնը պետք է բարձրացնել, որպեսզի ունկնդրի ուշադրությունը

կենտրոնացվի)։

Որից հետո աշակերտները բաժանվում են խմբերի և կատարում աշխատանք լեզվական գիտելիքների շուրջ։

ա)Առանձնացրու՛ և վերականգնի՛ր գրությամբ և արտասանությամբ տարբերբող բառերը։

բ)Գրի՛ր նմանատիպ գրությամբ մեկ նախադասություն և փոխանցի՛ր հարևան խմբին՝ նույն հանձնարարությամբ։

Կշռադատում

Անդրադարձ նկարազարդմանը

Նկարում պատկերված են բանաստեղծության հերոսները՝ հայրը և մայրը։ Ինչպիսի բառերով է բնութագրել հայրիկի ձեռքերը հեղինակը։Է՞լ ինչ բառերով կարող եք կարող եք բնութագրել դրանք։

Տնային աշխատանքի հանձնարարություն

Գրե՛լ շարադրություն՝ <<Իմ դասագրքերը >> վերնագրով։

Դասի վերլուծությու

Դասի ընթացքում օգտագործված մեթոդներն ու միջոցները

նպատակային էին և արդյունավետ:Հաջողվեց դասարանը ներգրավել դասապրոցեսի մեջ:

Աշակերտների մեծ մասը ակտիվորեն մասնակցեց դասին: Խմբային աշխատանքի ժամանակ ստեղծվեց համագործակցության և փոխօգնության առողջ մթնոլորտ:

Դասը բավականին ուսանելի էր, դասի պլանը համապատասխանում էր արդի պահանջներին,

հիմնական նպատակներն ու խնդիրները ձևակերպված էին հստակ:

Առարկան՝ մաթեմատիկա
Դասարան ՝ 3-րդ
Դասի տևողություն ՝ 45 րոպե
Դաս՝ 32 (էջ49)
Դասի տեսակը ՝ Հաղորդման դաս
Թեման ՝ Գործողությունների կատարման քայլաշար Դաս՝ 32 (էջ49)
Նպատակներ
• Իմանա անհայտ նվազելին, հանելին և գումարելին գտնելու քայլաշարը:
• Իմանա թիվը տեղադրելու կարգը և գործողությունների կատարման հերթականությունը:
• Իմանա «... ով ավելի, ով պակաս» պայմանով և «ընդամենը, քանի պահանջով խնդիրը լուծելու եղանակը»:
• Ամրակայել ամբողջապես տեսնելու ալգորիթմի ենթարկվող գործընթացը:
• Զարգացնել անսովոր իրավիճակներում և ոչ ստանդարտ բնույթի խնդիր լուծելիս կողմնորոշվելու կարողությունը:
Վերջնարդյունք.
• Կարողանա գտնել անհայտ բաղադրիչը և կատարել ստուգում:
• Կարողանա հաշվել թիվը և արտահայտության արժեքը:
• Կարողանա լուծել խնդիրը:
• Կարողանա ալգորիթմի ենթարկվող գործընթացը տրոհել քայլերի:
Միջառարկայական կապ՝ մայրենի , ես և շրջակա աշխարհը , տեխնոլոգիա
Ուսումնական նյութեր պաստառ , քարտեր , գունավոր կպչուն թղթեր ,
Խաչվող հասկացություն – օրինաչափություն
Դասի ընթացքը
ա) Դասի մուտք՝ սկիզբ և խթանում «Արա հիմա» քարտային աշխատանք/ արտահայտություն/՝ նշելով գործողությունների հերթականությունը: բ) Դասի հիմնական մաս՝ իմաստի ընկալում • Աշխատանք դասագրքով՝ 190-ի օրինակի միջոցով կատարել և հիմնավորել գործողությունների կատարման քայլաշարի ճիշտ

ընտրությունը: 1. Նայել լուսացույցին: 2. Եթե լույսը կանաչ է, անցնել փողոցը: 3. Եթե լույսը կանաչ չէ, սպասել: 4. Կրկնել քայլաշարը՝ սկսելով առաջին գործողությունից: • Խմբային աշխատանքի միջոցով գունավոր կպչուն թղթերով կազմել քայլաշարի հերթականությունը: Սկիզբնբ Նայել լուսացույցին լլլլուսացույցին Կանաչ լույս է փողոցն անցնել Սպասել • Հարց ու պատասխանի միջոցով վերհիշել բաղադրիչը գտնելու վերաբերյալ գիտելիքները՝ առաջադրանք 191ա, բ, գ 1-ական օրինակ կատարելով ա) 400 - □ = 299բ) □- 64 = 541գ) 399 + □ = 509 Խնդիր 193 ա, բ – մեկնաբանել լուծել ա-ն: գ) Դասի ամփոփում՝ կշռադատման փուլ: • Զույգերով (համագործակցային) աշխատանք՝ վարժություն 192 (էջ50) 1 a a a · 3 + 15 🙂·3 +25 +15 a 5 8 10 վերջ a·3+15 30 39 վերջ 45 Օգտագործվող հիմնական հասկացություններ- • Քայլաշարի հերթականություն՝ ալգորիթմ • Ներառարկայական և միջառարկայական կապեր • Անհայտ բաղադրիչ գտնելը Տնային աշխատանք- առաջադրանք 191-ի շարունակություն, խնդիր 193 բ): Անդրադարձ – 3, 2, 1

ԴԱՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՅՈՒՆ

Դասերի ընթացքում օգտագործված մեթոդներն ու միջոցներընպատակային էին և արդյունավետ: Հաջողվեց դասարանը ներգրավել դասապրոցեսի մեջ:Աշակերտների մեծ մասը ակտիվորեն մասնակցեց դասին:Որոշ աշակերտներ ունենալով հիմնավոր գիտելիքներ՝ կարողացան դրանք կիրառել խնդիրները լուծելիս: Խմբային աշխատանքների ժամանակ ստեղծվեց համագործակցության և փոխօգնության առողջ մթնոլորտ: Դասի ընթացքում կիրառվեց ուսուցանող գնահատում, իսկ միավորային գնահատումը կատարեց հիմնավոր:

Դասերը բավականին ուսանելի էին, դասի պլանները համապատասխանում էին արդի պահանջներին,հիմնական նպատակներն ու խնդիրները ձևակերպված էին հստակ:

Եզրակացություն

Ինքնուրույնաշխատանքիհմտություններըչենծագումիրենքիրենց, դրանք անհրաժեշտ է ձևավորել և դրանում հսկայական դեր ունի ուսուցիչը: Երեխաների ինքնուրույնությունը զարգանում է աստիճանաբար, դաստիարակվում է դասից դաս, դասարանից դասարան:

Տարրականդասարաններումուսուցմանգործընթացումդեռևսգերակշռում է աշխատանքիընդհանուրձևը, երբաշակերտներիգործողություններըհիմնականումկախվածենուսուցչիանմիջական հրահանգներից: Այսպիսիգործողություններըարգելակումեներեխաներիզարգացումը, և արդենհինգերորդդասարանումսովորողներըհայտնվումենանօգնականվիճակում՝ գրքիշուրջիրականացվողինքնուրույնաշխատանքի, առաջադրանքներիինքնուրույնլուծման, ստեղծագործականբնույթիաշխատանքներիկատարմանընթացքում: Առաջադրանքներիծավալընրաուժերիցվեր է դառնում, աշխատանքիտեմպը՝ դանդաղ:

Ինքնուսուցման պարագայում սովորողն ինքն է կազմակերպում, կարգավորում և հսկում իր իմացական գործունեությունը: Ինքնուսուցումը իմացական գործունեության բարձրագույն մակարդակն է, երբ անձը պատրաստ է ինչ-որ չափով դուրս գալ ուսումնական պահանջների սահմաններից, անցնել ազատ իմացական գործունեության, ինքն իր առաջ դնելով խնդիրներ՝ պայմանավորված իր հնարավորությունների գիտակցմամբ ու հաշվառմամբ:

Տարրականդասարաններումինքնուրույնէհամարվումայնաշխատանքը, որիընթացքումսովորողներըպարզորոշպատկերացնումենաշխատանքինպատակը, դրակատարմանկարգըևկատարումենայն՝առանցուսուցչիանմիջականմասնակցության:

Օգտագործված գրականության ցանկ

1. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, 50 հարց ու պատասխան տարրական դասարանների ուսուցիչների համար: Մաս II, «Զանգակ» հրատարակչություն, 2013թ.
2. Կարինե Թորոսյան, Վաչագան Սարգսյան, Կարինե Չիբուխչյան, Հեղինե Խաչատրյան, Սուսաննա Գրիգորյան, Մայրենի 2-4: Ուսուցչի ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, Երևան, 2011թ.
3. Կ. Թորոսյան, Ա. Բալայան, Կ. Չիբուխչյան, Մայրենիի դասերի պլանավորումը, «Զանգակ» հրատարակչություն, 2016թ.
4. Կ. Թորոսյան, Կ. Չիբուխչյան, Մ. Մանուկյան, Մեթոդական աշխատանքը դպրոցում, ձեռնարկ, «Զանգակ» հրատարակչություն, 2014 թ.